ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «28» նոյեմբերի 2019թ.

2019թ-ի նոյեմբերի 26-28-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով (բեռնափոխադրում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Բաղդասարյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն.
Ս. Չիդեմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ.
Հ. Զորջայան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և ԳԲ-ի մաքսազերծման գծով մասնագետ.
Ա. Սարգսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Արտասահմանյան գնումների գծով բաժնի պետի տեղակալ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.
Ա.Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բաղդասարյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի, վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Բաղդասարյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Ակտուատորների բեռնափոխադրման ծառայություն	4 497 780

ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը «17:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	«Յունիտրանս» ՍՊԸ	-	unitrans@netsys.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ԵՔԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ /հրավերի/ այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	-	«Յունիտրանս» ՍՊԸ	5 424 000	5 424 000

*տվյալ չափաբաժնի մասով վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Ալիսա Բաղդասարյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Նիստը կասեցնել 5 աշխատանքային օրով: /բանակցություն/
3. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել «Յունիտրանս» ՍՊԸ-ին միաժամանակյա բանակցությունների մասին:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ՉԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Յունիտրանս» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝

մասնակցի հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին «Յունիտրանս» ՍՊԸ-ի կողմից առաջարկած վերջնական գինը սահմանվեց համապատասխանաբար 5 364 000 ՀՀ դրամ, որը գերազանցում է 1-ին չափաբաժնի համար գնման հայտով սահմանված գինը:

Որոշվեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել ԵՋԷԿ-ՀՄԱԾՁԲ-19/163 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան _____

Հ. Չորջայան _____

Ա. Սարգսյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա.Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____